№ 97 Մայիսի 30 (Յունիսի 11) 1881 Մայիսի 30 (Յունիսի 11) № 97

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Ոտարարտասացիր գիմում են ազգակի

Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր թղթակիցներին։ — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Բագուից։ Նամակ Ղարսից։ Նամակ Բաշ-Շօրագեալից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Միացեալ ընկերութիւնք հայոց։ Ֆրանսիա։ Անգլիա։ Իտալիա։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ԲԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՆ

—

Վերջին ժամանակները, ինչպէս նկատած կը լինի ընթերցողը, „Մշակի“ մէջ շատ քիչ են սկսել տպվել գաւառական թղթակցութիւնները։ Դորան երեք պատճառ կայ։

Նախ քանի որ տպվում է Բաֆֆիի լօմանը, համարի մէջ շատ տեղ չէ մնում նամակների համար, որոնք տպվում են նոյն մանր տառերով։ Երկրորդ՝ Ռուսաստանի վերջին ժամանակների ներքին կեանքը այնքան զբաղեցնում է մեզ ամենքիս, որ Ռուսաստանի անցքերի վերաբերեալ նիւթերը թէ յօդուածների և թէ լուրերի ձեւով, համարի բաւական մեծ մաս են բռնում առհասարակ։ Վերջապէս և նոյն իսկ մեր գաւառական թղթակցութիւնների բովանդակութիւնը այն աստիճան միակողմանի է, որ մենք դժուարանում ենք մեր խմբագրութեան մէջ ստացվող բոլոր գաւառական նամակները մեր լրագրի էջերի մէջ զետեղելու։

Եւ ճշմարիտ, եթէ ուշադրութիւն դարձնենք գաւառական թղթակցութիւնների նիւթի վրա, կը համոզվենք, որ մեր գրեթէ բոլոր թղթակցութիւնները մի և նոյն խընդիրների վրա են խօսում. դպրոց, հոգաբարձութիւն, վարդապետ, ուսուցիչ, քահանայ և Էջմիածին,—ահա մեր հասարակական կեանքի այն նեղ շրջանը, որից իր բոլոր նիւթերը քաղում է առհասարակ ազգային մամուլի գաւառական թղթակիցը.... Բացառութիւն են կազմում քաղաքային վարչութիւնների վրա թղթակցութիւնները։

Այդ պատճառով չէ կարելի ուշադրութիւն չը դարձնել մեր ներկայ համարում զետեղված Բագուի նամակի վրա, որ նոր երևոյթ է կազմում մեր գաւառական թղթակցութիւնների շարքում։

Ինչ որ Բագուի արհեստաւոր թղթակիցը մեզ հաղորդում է գործարանական կեանքի յարաբերութիւնների վրա, նոյնման տեղեկութիւններ մեզ կարող էին հաղորդել և հայոց երկրագործական կեանքից, կալուածատէրերի և գիւղացիների փոխադարձ յարաբերութիւնների մասին։

Հայը համոզված լինելով որ ազգութիւնը հիմնված է միմիայն եկեղեցու վրա, երբ հիմնվում է մի ազգային լրագիր, կարծում է ուրեմն որ այդ լրագրին կարելի է թղթակցել միմիայն ազգային հարցերի վրա, այսինքն՝ Էջմիածնի, քահանաների, վարդապետների երէցփոխների և դպրոցների վրա, որովհետև դպրոցն էլ, իր հոգաբարձուներով, տեսուչով, վարժապետներով՝ եկեղեցական է։ Հայը միայն եկեղեցական բաները ազգային է համարում, իսկ ազգի տնտեսական, հասարակական կեանքը, հայի հացի խնդիրը,—այդ բոլորը ազգային չէ...

Մենք չենք ասում, որ Էջմիածնի, հոգևոր վարչութեան ազգի հետ ունեցած իրաւաբանական յարաբերութիւնների քննելը մամուլի գործը չէ, այլ պնդում ենք հոգևոր դասի այս կամ այն անձնաւորութեան արած գեղծումների քննելը ապարդիւն աշխատանք է, քանի որ մեր եկեղեցական այժմեան կազմակերպութիւնն է որ ծնեցնում է այս տեսակ վարդապետներին և քահանաներին։

Մեր թղթակիցները աշխատում են նկարագրել Կիրակոս կամ Ստեփան վարդապետի անարդար կամ անբարոյական արածները,—բայց մոռանում են որ այդ Ստեփան կամ Կիրակոս վարդապետները, ինչքան էլ գրէք նրանց մասին, այլ կերպ մարդիկ չեն կարող լինել, քանի որ վանական կազմակերպութիւնը այնպէս է որ միայն ուրիշ բանի անընդունակ մարդիկ կարող են նրա մէջ մտնել։ Ուրեմն ամբողջ կազմակերպութեան ձևը պէտք է վերանորոգել, որպէս զի պատուաւոր և լուսաւորված մարդիկ չը խորշեն մտնել այդ կազմակերպութեան մէջ։ Մենք յարձակվում ենք քահանաների անպիտանութեան դէմ, բայց մոռանում ենք որ քահանայի հասարակական դիրքը ամեն քաղաքացիական իրաւունքներից զուրկ, ամեն պատուասիրութեան զգացմունքից զուրկ մի դիրք է, ուրեմն լուսաւորված, պատուաւոր մարդը չի էլ համաձայնվի քահանայ լինել, այլ քանի որ մեր ժողովրդական հոգևորականութեան կազմակերպութիւնը նոյնը կը մնայ, քահանայ կը դառնայ միմիայն այն մարդը, որ կեանքի մէջ ոչինչ աջողութիւն չէ ունեցել և չէ կարող ունենալ։ Ուրեմն նախ պէտք է փոփոխել, վերանորոգել ժողովրդական հոգևորականութեան հիմնարկութեան ամբողջ կազմակերպութիւնը։

Այդ է պատճառը, որ մենք աւելորդ և ապարդիւն ենք համարում անդադար տպել մեր այն գաւառական բազմաթիւ թղթակցութիւնները, որոնց մէջ շարունակ նկարագրվում է այս ինչ վարդապետի, այն ինչ քահանայի անպիտանութիւնը և նրանց կատարած գեղծումները։ Մենք արդէն վաղուց գիտենք թէ հայ վարդապետը ինչ է, հայ քահանան ինչ է։ Եթէ Կիրակոս, Պետրոս, Մարտիրոս և Պօղոս վարդապետների արածները հազար անգամ նկարագրել ենք, առանձին հարկաւորութիւն չը կայ այժմ Ստեփան, Գէորգ և Յովհաննէս վարդապետների նոյնանման գործերը նկարագրելու, քանի որ նրանք մի և նոյն անմխիթար կազմակերպութեան արգասիք են, նոյն հընացած սիստեմայի ծնունդ են։

Մենք չենք ասում որ մամուլը անզօր է կազմել հասարակական կոնտրոլ այն հիմնարկութեան վրա, որ իր համար իրաւունք է համարում ազատ մնալ ամեն տեսակ հասարակական կոնտրոլից, բայց աւելորդ ենք համարում մամուլի մէջ անդադար յարուցանել հետևանքների մասին խնդիրը, քանի որ հասարակութիւնը դեռ ևս պատրաստ չէ ըմբռնել բուն պատճառները։ Այս ինչ վարդապետը կրտ է, անպիտան է,—այդ մենք էլ գիտենք։ Բայց ինչի՞ է վատ ու անպիտան դառնում վարդապետը,—որովհետև նա այլ լինել չէ կարող, քանի որ այն կազմակերպութիւնը, որի անդամ է նա, չէ կարող իրանից ծնեցնել, կամ իր մէջն ընդունել մի աւելի լաւին։

Ուրեմն նախ պէտք է ամբողջ կազմակերպութիւնը փոխել։ Իսկ երբ որ խօսք կը դայ կազմակերպութեան վերանորոգելու մասին, նոյն մարդիկ, որոնք զայրացած էին քահանաների և վարդապետների արածներից,—վերանորոգութիւն առաջարկողին ազգի և եկեղեցու թշնամի կը համարեն։

Մենք վերջացնում ենք մեր խօսքը դարձեալ հրաւիրելով ընթերցողի ուշադրութիւնը մեր այս համարում տպված Բագուի նամակի վրա, և խնդրում ենք մեր գաւառական թղթակիցներին դիտել, ուսումնասիրել և նկարագրել հայ հասարակութեան տնտեսական կեանքը։ Ազգային կեանքը չէ պարունակվում միմիայն եկեղեցու մէջ, այլև ազգի անդամների միմեանց հետ ունեցած տնտեսական յարաբերութիւնների մէջ։ Հացի խնդիրը նոյնքան ազգային հարց է, որքան եկեղեցու, վանքի և դպրոցի խնդիրը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Մայիսի 20-ին

Այն օրից երբ սկսել են հիմնվել Բագվում նաֆթի գործարաններ, յայտնի է որ նրանց հետ բացել են և կաթսայագործների արհեստանոցներ և դարբնոցներ։ Ինչքան առաջինների թիւն է աւելացել, աւելացել է նրանց պահանջի համեմատ և երկրորդների թիւն էլ։ Նաֆթի գործը ընթանալով միշտ առաջ է գնացել, որից յետոյ, վերոյիշեալ կաթսայագործները այլ ևս չը կարողանալով լցուցանել գործարանատէրերի բազմաթիւ պահանջները. քիչ քիչ սկսում են հիմնվել առանձին երկաթի գործարաններ, որոնց ընդհանուր թիւը այժմ չորս է, չը հաշուելով պ. պ. Միրզոյեանի, Նօբէլի, Կօկօրեվի և «Կովկաս և Մերկուրիյ» ընկերութեան գործարանները, որոնք ծառայում են միայն իրանց նաֆթի գործարանների և շոգենաւերի զանազան պահանջները լցուցանելուն, և որոնց ամեն մէկի մէջ 70—150 բանվոր են գործում։ Միւս գործարաններից առաջինը պատկանում է հայերից և ուրիշներից բաղկացած մի ընկերութեան, որը 7 տարի է գոյութիւն ունի. այդ տեղ գործավարների թիւը երբեմն 300-ի է հասնում։ Միւսներում համեմատաբար քիչ են, բայց և այնպէս երկի մէջ գէթ 300 գործողներ կան։ Իսկ ընդհանուր, առհասարակ երկաթագործութեան վերաբերեալ, արհեստով պարապողների թիւը 1000 պէտք է լինի, եթէ հաշուելու լինենք և մասնաւոր փոքրիկ արհեստանոցներում գործողներին։ Այդպիսի գործարաններում արհեստը բաժանվում է մի քանի տեսակների, որոնց մէկը առանց միւսի կցորդութեան չէ կարող գոյութիւն ունենալ, օրինակ կաղապարագործը, պէտք է իր կաղապարը պատրաստէ, յետոյ ձուլողի ձեռքը պտի անցնէ, յետոյ ճախարակագործի և վերջապէս, փականագործի, որի ձեռից արդէն պատրաստ դուրս կը գայ այն, ինչ որ կը պահանջէք։ Այնու ամենայնիւ կարող են և առանց կցորդութեան ևս գործել թէ փականագործը, պղնձեգործը, դարբինը և կաթսայագործը. առանց երկարացնելու մի քանի խօսք էլ գործողների վերաբերմամբ ասենք։ Աշխարհի ամեն ծայրերից մարդ կը գտնէք այս տեղ, սկսած ամենահեռաւոր Ամերիկայից անգամ. գերմանացի, չվեդացի, չէխ, ռուս, և այլն. իսկ հայ վարպետների թիւը այնքան քիչ է, որ լաւ է ասել հայ չը կայ։ Ասացի վարպետներ, իսկ մշակներ, մուրճ զարկողները՝ գործողների մի քառորդն են կազմում։ Այլազգիները բոլորն էլ իրանց արհեստը սովորած են իրանց հայրենիքում բացի կովկասեցի ռուսներից, որոնք Բագուի մէջ են սկսել և սովորել. ուրեմն և ապահոված են իրանց դրութիւնը, իսկ խեղճ հայը, ինչ անէ, ում դիմէ, ումից սովորէ, որտեղից իմանայ։ Գործարանատէրը հայ է. նրան դիմել,—ոչ. նա զբաղված է միայն իր փող դիզելով և հարստահարութեամբ, նա հայ մշակի թշնամին է, նա խօսքով և ոչ գործով ազգասէր է. դիմել ռուս վարպետին—նա իրաններին է օգնում, նրա աչքին հայը արհամարհելի է, նա չէ ուզում հասկանալ ինչ է քրիստոնեայ, ինչ է մարդ։ Ամեն մի քայլում աշխատում է ցածացնել վարդ և եթէ կարելի է հողի հետ հաւասարացնել։ Կաթսայագործ մուժիկին, այո, մուժիկին, բառի լայն նշանակութեամբ, մի փոքրիկ սխալ ներելի է, բայց եթէ հայը գործեց,—վայ նրան, ահագին մուշտի հարուածը պիտի նստեցնէ ուսերին, գլխին։ Ես ինքս ականատես եմ եղել, մի քանի անգամ մուրճի հարուածից ուշաթափ վայր ընկած հայի։ Եւ ինքս ճշմարիտը խոստովանել դժբախտութիւն եմ ունեցել վայելելու աշակերտ ժամանակ այդ հարուածները։ Իսկ յիշացներ,—այդ սովորական բան է, ամեն կողմից, եթէ մինչև անգամ մի նոր բլուզ էլ հագնես, հազար ծաղրածութիւններ, որոնց հետևում են յիշոցաբանութիւն, անաթեմա, սէմիսաբօրնիյ, սօլիսնիյ և այլն։

Բայց դարձեալ հայը իր յատկութեան համեմատ, այն է տանել համբերութեամբ ծանր անտանելի լուծը, քաշում է, և երբեմն իր ցանկացած նպատակին հասնում։ Այդպէս տարուայ մէջ Բագուում մինչ 10—12 հայ կցկտուր իմացող իրանց գործը վարպետներ են դուրս եկել։ Շատ ընդունակ տղաներ էլ լինում են մեր մէջ, բայց որոնք ոչ մի միջոց չեն ստանում՝ կարչում են իրանք էլ, իրանց ընդունակութիւնն էլ։ Եւ այդ միջոց տալը կախված է հայ գործարանատէրերից, եթէ ցանկանում են որ հայ վարպետներ ունենան։ Թող յանձնեն գերմանացուն, չվէդացուն, կամ նոյն ռուսին հայ աշակերտին, և ես հաւատացած եմ, որ կարճ ժամանակում կարող են թէ իրանք լաւ օգտվել, և թէ փոխադարձաբար օգնել և հայ գործողին։ Ահա այդպէս սիրած կը լինեն ազգը և ոչ լոկ խօսքով։ Հայը լաւ գործող է, հարբեցող չէ և հաւատարիմ է։

Վարպետները ստանում են ամենաքիչը (minimum) մի բուբլ և ամենաշատը (maximum) 3 բուբլ. վերջինների թիւը չէ կարելի հինգից աւել հաշուել։ Իսկ մշակները և աշակերտները ստանում են մինչև 1 բուբլ 10 կոպէկ, 15 կոպէկից սկսած։

Թող պատուելի Միրզոյեանը, Ամիրեանը և Մարտիրոսեանը, ուշադրութիւն դարձնեն իրանց արիւնակիցների դրութեան վրա իրանց գործարաններում. մենք ամաչում ենք երբ որ տեսնում ենք «Կովկաս և Մերկուրիյ» ընկերութիւնը, թէև չը կատարելագործած, այլ հասարակ հայ վարպետներ է դուրս բերել մինչև 6 հոգի, չը նայելով որ կառավարչութիւնը այլազգիների ձեռին է այդ ընկերութեան մէջ։ Բայց հայերին պատկանող գործարաններից ամենաչնչին թիւն է երևում, այն է 4—5 հայի։ Միւս նամակումս կը խօսեմ Բագուի տակառագործների վրա։

Ալ. Արէլեան